- ներքին վարկի տոկոսավճարներ	4412	8930.0	8930.0	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01. 04. 2018թ. - 30. 10. 2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին <<Գյումրու քաղաքային ճանապարհներ>> ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում հիմնանորոգվելու է Ծրագրում ընդգրկված հրապարակները և փողոցները, ինչպես նաև արդիականացվելու է քաղաքի արտաքին լուսավորության ցանցն ամբողջությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ Գյումրի քաղաքում ունենալ անվտանգ երթևեկության կազմակերպման համար բարեկարգ փողոցներ և էներգախնայող արտաքին լուսավորության ցանց:

ՎԶԵԲ-ի կողմից ընտրված <<ԱյՍի>> և <<Բեռնարդ Ինժինիրինգի>> ավստրիական խորհրդատվական կազմակերպությունների միջոցով իրականացվել է նախնական ուսումնասիրություններ և կազմվել է Ծրագրի իրագործելիության վերաբերյալ հաշվետվություն:

Վարկային, դրամաշնորհային և Ծրագրի համաձայնագրերը ստորագրվել են 2016 թվականի մայիսի 11-ին: Ծրագրի ընդհանուր արժեքը, ըստ համաձայնագրերի, կազմում է 23.5 մլն. եվրո: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներից 7.3 մլն. եվրոն տրամադրվել է որպես համաֆինանսավորման դրամաշնորհ, 1.6 մլն. եվրոն տեխնիկական համագործակցության դրամաշնորհ, իսկ մնացած 14.6 մլն. եվրոն որպես վարկ, տոկոսադրույքը՝ վեցամսյա EURIBOR + տարեկան 1 տոկոս մարժա, 15 տարի մարման ժամկետով, որից առաջին 3 տարին որպես վարկի մարման արտոնյալ ժամանակահատված: Ծրագրի շրջանակներում կնքվող պայմանագրերի անուղակի

հարկերը(այդ թվում ԱԱՀ-ն) տրամադրվելու են ՀՀ պետական բյուջեից: Վարկային միջոցների մայր գումարի մարումը նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ տոկոսագումարները վճարվելու են համայնքի բյուջեից:

Ծրագրի տևողությունը 36(երեսունվեց) ամիս է վարկը էֆեկտիվ համարվելուց հետո:Վարկի էֆեկտիվության ժամկետի սկիզբ է համարվում 2017 թվականի հունիսի 15-ը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հիմնովին վերանորոգել Ծրագրում ընդգրկված քաղաքի հրապարակները և փողոցներն՝ իրենց հարակից մայթերով, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 302.274 քառակուսի մետր, համապատասխանաբար՝ 218.176 քառակուսի մետր փողոց, 84.098 քառակուսի մետր մայթ: Հիմնանորոգված փողոցներում նաև անցկացվելու է 15.185 մետր ջրահեռացման համակարգ: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգման ենթակա փողոցների կահավորում ճանապարհային երթևեկության նշաններով: Արտաքին լուսավորության համակարգը արդիականացնելու արդյունքում նախատեսվում է տեղադրել թվով 1500 նոր հենասյուներ, վերանայելով գոյություն ունեցող հենասյուների տեղադրությունը և դրանց հեռավորությունները, վերանորոգել թվով 5400 հենասյուներ: Բացի նոր հենասյուներ տեղադրելուց, գոյություն ունեցող հենասյուների վերանորոգումից նախատեսվում է նաև լուսադիրային թվով 11500 լուսատուների տեղադրում՝ ապահովելով արդյունավետ և անվտանգ լուսավորության համակարգ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է գոյություն ունեցող մալուխային ցանցի փոխարինում նորով՝ մոտ 700 կիլոմետր երկարությամբ, որի արդյունքում անվտանգության աստիճանը էականորեն կբարձրանա: Արդիականացման ծրագիրն ամբողջական դարձնելու համար, որպես հաջորդ բաղադրիչ ստեղծվելու է արտաքին լուսավորության ավտոմատ կառավարման կենտրոն, ինչը հնարավորություն կտա առցանց ռեժիմով հետևել լուսատուների հոսանքի բեռին, անջատումներին և մատակարարումների խափանումներին:

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

#### **1. Ծրագրի անվանումը**

**<<Աջակցություն գորակոչի և գորահավաքների կազմակերպմանն>>**

#### **2. Ծրագրի դասիչը**

Բաժին 02, խումբ 5 , դաս 1

### 3. Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքի ղեկավարի լիազորությունների սահմաններում հանրապետական նշանակության զինավարժությունների և զորահավաքների կազմակերպման աջակցություն:

### 4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Օրենքով սահմանված կարգով հանրապետական զորակոչերին, զինավարժություններին և զորահավաքներին համայնքի զինապարտ քաղաքացիների մասնակցության ապահովում:

### 5. Ծրագրի բյուջեն

2018թ. այս ծրագրով նախատեսվել է **4100.0 հազ դրամ**

### 6. Ծրագրի բացվածքը

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված Հոդված	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>4100.0</b>	<b>4100.0</b>	<b>0.0</b>
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	200.0	200.0	0,0
-Տրանսպորտային նյութեր	4264	300.0	300.0	0,0
-Այլ ընթացիկ ծախսեր	4861	3600.0	3600.0	0.0

### 7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01.02.2018թ. - 20.12.2018թ.

### 8. Տեղեկանք հիմնավորում

Նախատեսված միջոցների հաշվին ձեռք կբերվի վառելանյութ և գրենական պիտույքներ Օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման համար: Ծրագրի շրջանակներում 2018 թվականին նախատեսվում է նաև գումար հատկացնել համայնքի բնակիչ հանդիսացող և Արցախում ծառայող ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինվորների ընտանիքի անդամներին ծառայության վայրեր թվով չորս այցեր կազմակերպելու համար:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

<<Ճանապարհային տնտեսություն>>

1.1 <<Ասֆալտե տնտեսություն ծածկի ընթացիկ և կապիտալ վերանորոգում ու պահպանում>>

1.2 <<Փողոցների խճապարում, նշագծում և ճանապարհային նշանների տեղադրում>>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 04, խումբ 5, դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Հիմնովին կամ մասնակի վերանորոգել փողոցների, մայրերի և բակային տարածքների քանդված ասֆալտե տնտեսություն ծածկը(ասֆալտապատում, քարապատում և խճապատում): Փողոցների նշագծման, ճանապարհային նշանների տեղադրման միջոցով ճանապարհային երթևեկությունը դարձնել անվտանգ հետիոտնի և տրանսպորտային միջոցների շահագործման համար:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Քաղաքի փողոցները, մայրերը և բակային տարածքները կլինեն առավել բարեկարգ, տրանսպորտային միջոցների երթևեկությունը կլինի անվտանգ և կվերանան անհարմարությունները բնակիչների համար:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ. համար նախատեսվում է **380948.8 հազ. դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>1.1 Ընդամենը ծախսեր</b>		<b>348623.8</b>	<b>174268.5</b>	<b>174355.3</b>
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	174268.5	174268.5	0.0
-Շենքերի և կառույցների կապիտալ նորոգում	5113	174355.3	0.0	174355.3

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (u4+u5)	այդ թվում՝	
			վարչական մաս	Ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>1.2 Ընդամենը ծախսեր</b>		<b>32325.0</b>	<b>32325.0</b>	<b>0.0</b>
-Այլ ծառայություններ	4239	7875.0	7875.0	0.0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	24450.0	24450.0	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

10.03.2018թ. - 15.11.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Հաշվի առնելով տրանսպորտային միջոցներին և բնակիչներին պատճառվող անհարմարություններն ու վնասները անհրաժեշտ է վերանորոգել անբարեկարգ տարածքները, դարձնել բարեկարգ, անվտանգ և անցանելի: Անվտանգ երթևեկության կազմակերպման համար տեղադրել ճանապարհային երթևեկության նշաններ և նշագծել փողոցները: Ձմեռային ամիսների համար անհրաժեշտ է ձեռք բերել աղ և ավազ, փողոցների և մայրերի մշակման աշխատանքների համար: Որոշ երկրորդական փողոցներ խճապատելու համար ձեռք կբերվի մոտ 2100 մ.խ խիճ: Վաղ գարնանն և ուշ աշնանը փողոցների նախնական փոսալցման, համար նախատեսվում է ձեռք բերել 357 տոննա սև խիճ, որը հնարավորություն կընձեռնի մինչև հիմնական փողոցաշինական աշխատանքների սկսելը ապահովել քաղաքային տրանսպորտի անվտանգ երթևեկությունը:

Հաշվարկը կատարվել է հիմք ընդունելով 2017թ. կատարված աշխատանքների գները: Ընթացիկ վերանորոգման ենթակա փողոցների ցանկը կհաստատվի գարնանը փողոցների ուսումնասիրությունների արդյունքում կազմված թերությունների ակտերի հիման վրա, որից հետո համաձայն դրանց կպատվիրվեն համապատասխան նախահաշվային փաստաթղթեր, նախատեսվում է վերանորոգել շուրջ 21000 ք.մ ասֆալտբետոնի ծածկ, կատարել 18500 գ.մ ճաքալցման աշխատանքներ: 2018 թվականի ընթացքում կապիտալ վերանորոգման համար նախատեսված փողոցների և հրապարակների մասով կազմվել են նախնական նախագծանախահաշվային փաստաթղթեր, հիմնանորոգվելու է թվով չորս փողոց 8835 ք.մ մակերեսով և մեկ հրապարակ 6950 ք.մ մակերեսով, հիմնանորոգվելու են նաև փողոցների հարակից մայրերը 3980ք.մ մակերեսով:

Հարկ է նշել նաև, որ համայնքային միջոցներով իրականացվող փողոցաշինական ծրագրից բացի աշխատանքների են իրականացվելու նաև «Գյումրու քաղաքային ճանապարհներ» և «Կումայրի վերածնունդ» ծրագրերի շրջանակներում, որոնք կունենան իրենց զգալի ազդեցությունը համայնքի ընդհանուր փողոցաշինական աշխատանքների ծավալների վրա:



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԳՅՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

**<<Աղբահանություն և սանիտարական մաքրում>>**

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 05, խումբ 1, դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայրերը, բակային տարածքները, հուշարձանների և այլ ինժեներական կառույցների հարակից տարածքները՝ պահպանելով սանիտարահիգիենիկ պահանջները: Բացառել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ներգործությունը:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Ունենալ մաքուր գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, որոնք կօգտագործվեն համայնքի բնակիչների և այցելուների կողմից:

**5. Ծրագրի բյուջեն**

2018 թվականին այս ծրագրի համար նախատեսվել է **319215.0 հազ. դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>319215.0</b>	<b>315265.0</b>	<b>3950.0</b>
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	250147.9	250147.9	0.0
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	5120.0	5120.0	0.0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	2083.2	2083.2	0.0
-Կոմունալ ծառայություններ	4213	9360.0	9360.0	0.0

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված №	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
-Ապահովագրական ծախսեր	4215	1431.0	1431.0	0.0
-Մասնագիտական ծառայություններ	4241	302.4	302.4	0.0
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	560.0	560.0	0.0
-Տրանսպորտային նյութեր	4264	44780.5	44780.5	0.0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1480.0	1480.0	0.0
-Այլ մեքենա սարքավորումներ	5129	3950.0	0.0	3950.0

### 7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01.01.2018թ. - 31.12.2018թ.

### 8. Տեղեկանք հիմնավորում

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի միջոցով: Հիմնարկի գործառույթները, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Սանմաքրման և աղբահանության աշխատանքները կազմակերպվելու են հիմնարկին պատկանող 14 աղբատար ավտոմեքենաների և այլ հատուկ տեխնիկաների միջոցով: Աշխատանքների կազմակերպման համար հիշյալ ծրագրով հիմնարկին նախատեսվում է ֆինանսավորել հետևյալ ուղղություններով.

1. Անհրաժեշտ հինգ տրանսպորտային և չորս հատուկ մեքենաների վարձակալության ծախսեր, որոնք կապահովեն աշխատանքների պատշաճ կազմակերպումը,
2. Թվով տասնչորս տրանսպորտային միջոցների ռադիոլուկացիոն տեղորոշման ծառայությունների գնում,
3. Աղբադաշտի հարթեցման և կարգաբերման աշխատանքների ձեռք բերում,
4. Հիմնարկի թվով 27 տրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրություն,
5. Հիմնարկին պատկանող թվով 27 մեքենա-սարքավորումներ վերանորոգման ծառայությունների գնում,
6. Աշխատակազմի բնականոն աշխատանքային գործառնությունների իրականացման համար գրասենյակային ապրանքների գնում:
7. Տրանսպորտային միջոցների շահագործման համար շուրջ 60000 լիտր դիզ. վառելիքի, 42000 խ.մ սեղմված գազի, քսայուղերի, ավտոպահեստամաս և այլ նյութերի ձեռք բերման ծախսեր,
8. Աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ շինարարական նյութերի ձեռք բերման ծախսեր,

9. 120 փոքր և 22 մեծ աղբարկղերի, ինչպես նաև դրանց համար առանձնացված տարածքների թվով 5 պատնեշների ձեռք բերման ծախսեր,

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՅԿԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏԿՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

<<Կանաչ տարածքների հիմնում և պահպանում>>

**2. Ծրագրի դասիչը .**

Բաժին 05, խումբ 6 , դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի կանաչ տարածքների խնամք և նոր կանաչապատ տարածքների ստեղծում, ապահովելով օդային ավազանի մաքրությունը: Քաղաքի բնակիչների և հյուրերի համար ստեղծել առավել բարենպաստ և գրավիչ հանգստի վայրեր:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Կստեղծվի առավել բարենպաստ պայմաններ բնակիչների հանգստի և ժամանցի համար, կապահովվի օդի մաքրությունը, կանաչապատ տարածքներով շրջապատը կունենա ավելի գրավիչ տեսք:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ.այս ծրագրով նախատեսվում է 55511.հազ.դրամ

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>55511.4</b>	<b>53391.4</b>	<b>2120.0</b>
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	45701.4	45701.4	0.0
-Տրանսպորտային նյութեր	4264	4860.0	4860.0	0.0
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	1850.0	1850.0	0.0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	980.0	980.0	0.0
-Աճեցվող ակտիվներ	5131	2120.0	0.0	2120.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.04.2018թ. – 30.11.2018թ.

## **8. Տեղեկանք հիմնավորում**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի միջոցով: Հիմնարկի գործառույթները, կառուցվածք և հաստիքացուցակը հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Կանաչապատման աշխատանքները կազմակերպվելու են հիմնարկին պատկանող տրանսպորտային միջոցներով, որոնք մեծ մասամբ օգտագործվում են բարեկարգման ծրագրի շրջանակներում, ուստի դրանց ապահովագրության, վերանորոգման և պահպանման ծախսերը(տրանսպորտային նյութերի) կատարվելու են բարեկարգման ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին: Հիշյալ ծրագրով աշխատանքների կազմակերպման համար հիմնարկին նախատեսվում է ֆինանսավորել հետևյալ ուղղություններով.

1. Տրանսպորտային միջոցների շահագործման համար 7000 լիտր դիզ. վառելիքի, 12000 խ.մ սեղմված գազի, քսայուղերի, ավտոպահեստամաս և այլ նյութերի ձեռք բերման ծախսեր,
2. Ծաղկասածիլների, սերմերի և գյուղատնտեսական այլ ապրանքների գնման ծախսեր, շուրջ 4.8 հեկտար կանաչապատելու համար:
3. Կանաչապատման աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ թունաքիմիկատների և այլ նյութերի ձեռք բերման ծախսեր,
4. Նոր ստեղծվող, ինչպես նաև գոյություն ունեցող կանաչապատ տարածքների համար ծառերի, բազմամյա տնկիների և թփերի ձեռք բերման ծախսեր, շուրջ 18 հեկտար կանաչապատելու համար:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

### **1. Ծրագրի անվանումը**

**<<Թափառող կենդանիների վնասազերծում>>**

### **2. Ծրագրի դասիչը .**

Բաժին 05, խումբ 6, դաս 1

### **3. Ծրագրի իրականացման նպատակը**

Գյումրի քաղաքի տարածքում տարեցտարի ավելացող թափառող կենդանիների դեմ պայքարի իրականացում քաղաքացիների համար առավել անվտանգ պայմաններ ապահովելու համար:

### **4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Թափառող կենդանիների վնասագերծման միջոցով լուծել հանրային առողջությանն ու անվտանգությանը սպառնացող հիմնախնդիրը:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ համար նախատեսվում է **4277,0 հազ.դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>4277,0</b>	<b>4277,0</b>	<b>0,0</b>
-Կոմունալ ծառայություններ	4213	4277.0	4277.0	0,0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01. 01. 2018թ. - 31.12.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված <<Քաղաքային զբոսայգիներ>> ՀՈԱԿ-ի միջոցով: Մեկ կենդանու վնասագերծման համար նախատեսվում է ծախսել 2350 դրամ: 2018թ. նախատեսվում է վնասագերծել 1820 թափառող կենդանի:

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

<<Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում>>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 06, խումբ 4 , դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Երեկոյան և գիշերային ժամերին համայնքի տարածքում փողոցների լուսավորում, շենքերի և կառույցների գեղարվեստական լուսավորում:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

հրիկնային ժամերին առավել հարմարավետ և անվտանգ դարձնել փողոցային երթևեկությունը, ապահովել շինությունների և կառույցների գեղարվեստական լուսավորումն առավել գրավիչ դարձնել դրանց տեսքը:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ. այս ծրագրով նախատեսվել է **209835.0 հազ դրամ**:

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	Ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>209835.0</b>	<b>206470.0</b>	<b>3365.0</b>
-Էներգետիկ ծառայություններ	4212	204670.0	204670.0	0.0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1800.0	1800.0	0.0
-Այլ կառույցների շինարարություն	5112	1740.0	0.0	1740.0
-Այլ սարքավորումներ	5129	1625.0	0.0	1625.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01.2018թ. - 31.12.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում ծրագրով 2018 թվականի համար նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են թվով 5850 փողոցային լուսավորության և կառույցների գեղարվեստական լուսավորման լուսակետերի սպասարկմանն ու դրանց շահագործման ընթացքում սպառած էլեկտրաէներգիայի վարձի վճարմանը: Հիշյալ ծրագրով նախատեսվում է նաև ֆինանսավորել ամանորյա գեղարվեստական լուսավորման գոյություն ունեցող համակարգերի վերանորոգման աշխատանքները, ինչի համար անհրաժեշտ ապրանքները և նյութերը ձեռք են բերվելու համայնքի միջոցների հաշվին ըստ թերությունների ակտերով արձանագրված քանակների:

Հարկ է նշել, որ թվով 5850 փողոցային լուսավորության լուսակետերից 641-ը շահագործվում են LED էկոնոմ լամպերով:

Ֆոնդային բյուջեով ֆինանսական միջոցներ են նախատեսվել նաև թվով 20 նոր հենասյուներով լուսակետերի և հին հենասյուների վրա թվով 50 լուսատուների մոնտաժման աշխատանքների համար:

**1. Ծրագրի անվանումը**

<< Փողային նվազախմբին հարկացված տարածքի կապիտալ վերանորոգում >>

**2. Ծրագրի դասիչը .**

Բաժին 06, խումբ 6 , դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Ունենալ կահավորված և հարմարավետ շինություն համայնքի փողային նվազախմբի գործունեությունը առավել բարեկեցիկ պայմաններում կազմակերպելու համար:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Հիմնանորոգված հարմարավետ շինության գործարկումը կխթանի նվազախմբային արվեստի զարգացումը, ապահովելով Գյումրու փողային նվազախմբի ստեղծած ավանդույթների շարունակականությունը:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ համար նախատեսվում է **19780.0 հազ.դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ն Պ Ո Ւ Ն	Ը ն դ ա մ ե ն ը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վ ար չ ա կ ա ն մ ա ս	Ֆ ո ն դ ա յ ի ն մ ա ս
1	2	3	4	5
<b>Ը ն դ ա մ ե ն ը ծ ա խ ս եր</b>		<b>19780,0</b>	<b>0,0</b>	<b>19780,0</b>
- Շենքերի և կառույցների կապիտալ վերանորոգում	5113	19780.0	0.0	19780.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01. 04. 2018թ. - 30. 11. 2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Համայնքապետարանի նախկին պիոներ պալատի տնակային տարածքը տրամադրվել է Գյումրու փողային նվազախմբին: Համայնքի միջոցների հաշվին նախատեսվում է

հիմնանորոգել հատկացված տարածքի և ստեղծել հարմարավետ պայմաններ նվազախմբի հետագա գործունեության կազմակերպման համար: Արդեն իսկ պատրաստ են նախագծանախահաշվային փաստաթղթերի նախնական տարբերակները, որոնց հիման վրա 2018 թվականին կիրականացվի հիմնանորոգման աշխատանքները:

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

### **1. Ծրագրի անվանումը**

**<<Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների հիմնում, նորոգում ու պահպանում>>**

### **2. Ծրագրի դասիչը**

Բաժին 06, խումբ 6, դաս 1

### **3. Ծրագրի իրականացման նպատակը**

Ստեղծել բարեկարգ հասարակական նշանակության տարածքներ, բակային տարածքներ հանգստի և ժամանցի համար, խաղահրապարակներ երեխաների համար: Բարեկարգ բակերում, այգիներում և պուրակներում մարդկանց հանգստի և ժամանցի նպատակով, ձեռք բերել և տեղադրել նստարաններ, զրուցարաններ: Ձեռք բերել փոքր աղբամաններ՝ բակային բարեկարգված տարածքներում, այգիներում, պուրակներում, հասարակական տրանսպորտի կանգառներում տեղադրելու համար:

### **4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Բակերը բերել բարեկարգ տեսքի, բարելավել բնակիչների հանգստի կազմակերպումը, ստեղծել հաճելի պայմաններ երեխաների ժամանցի և խաղերի համար: Նստարանների և զրուցարանների տեղադրմամբ առավել կազմակերպված դարձնել մարդկանց հանգիստն ու ժամանցը:

Աղբամանների տեղադրմամբ հորդորել մարդկանց աղբը նետել աղբամաններ և չաղտոտել շրջապատը, չվնասել կանաչ տարածքները:

### **5. Ծրագրի բյուջեն**

Նշված ուղղությամբ 2018թ. համար նախատեսվում է **130650.7հազ դրամ**



**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>130650.7</b>	<b>100850.7</b>	<b>29800.0</b>
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	48618.2	48618.2	
-Ապահովագրական ծախսեր	4215	371.0	371.0	
-Մասնագիտական ծառայություններ	4241	78.4	78.4	
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	2000.0	2000.0	
- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	2750.0	2750.0	
-Տրանսպորտային նյութեր	4264	37480.0	37480.0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	9553.1	9553.1	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	29800.0	0.0	29800.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01. 2018թ – 30.12. 2018թ

**8. Տեղեկանք հիմնավորում**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի միջոցով: Հիմնարկի գործառույթները, կառուցվածք և հաստիքացուցակը հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Ընդհանուր օգտագործման հանրային տարածքների բարեկարգման աշխատանքները իրականացվելու են հիմնարկին պատկանող 7 ավտոմեքենաների և այլ հատուկ տեխնիկաների(տրակտոր, բարձիչ, ավտոաշտարակ, ավտոկոունկ, ձյուն հավաքող մեքենա, գրեյդեր) միջոցով: Աշխատանքների կազմակերպման համար հիշյալ ծրագրով հիմնարկին նախատեսվում է ֆինանսավորել հետևյալ ուղղություններով.

1. Հիմնարկի թվով 7 տրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրություն,
2. Հիմնարկին պատկանող թվով 12 մեքենա-սարքավորումներ տեխսպասարկման և վերանորոգման ծառայությունների գնում,
3. Հիմնարկի ավտոպարկի տարածքի ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր:
4. Տրանսպորտային միջոցների շահագործման համար շուրջ 40000 լիտր դիզ. վառելիքի, 60000 խ.մ սեղմված գազի, քսայուղերի, ավտոպահեստամաս և այլ նյութերի ձեռք բերման ծախսեր,

5. Աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ շինարարական նյութերի(ցեմենտ, ավազ, քար, ներկանյութեր) ձեռք բերման ծախսեր,
6. Վարձակալական հիմունքներով հիմնարկում օգտագործվող մեքենամեխանիզմների փոխարեն նախատեսվում է ձեռք բերել թվով երկու տրանսպորտային միջոցներ
7. Նախատեսվում է նաև ձեռք բերել և բակային տարածքներում տեղադրել թվով չորս խաղահրապարակներ և 50 բակային նստարաններ:

**ԳՅՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

<< **Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ**>>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 06, խումբ 6 , դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Աջակցել համայնքի տարածքում գործող համատիրություններին բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի բարեկարգման աշխատանքներում:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Առավել բարեկարգ և շահագործման համար անվտանգ դարձնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերը, նկուղները և տանիքները:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ. այս ուղղությամբ նախատեսվել է **16000.0 հազ դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>16000,0</b>	<b>16000,0</b>	<b>0,0</b>
-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	16000.0	16000.0	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.03.2018թ.- 30.11.2018թ.

### **8. Տեղեկանք հիմնավորում**

Համատիրությունների առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ենք համարում յուրաքանչյուր տարի լավ աշխատող համատիրություններին հատկացնել աջակցություն կատարվող աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի գնման համար: Նախահաշիվները կազմվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից համատիրությունների ներկայացված թերությունների ակտերի հիման վրա: Հատկացումների պլանավորումը իրականացվել է նախորդ տարիներին կատարած ծրագրերի հիման վրա 15 համատիրությունների հաշվարկով:

## **ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ**

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

### **1. Ծրագրի անվանումը**

**<<Սպորտի պահպանում և զարգացում>>**

### **2. Ծրագրի դասիչը**

Բաժին 08, խումբ 1, դաս 1

### **3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքային ենթակայության թվով 15 մարզադպրոցների պահպանման միջոցով կազմակերպել համայնքի սպորտային կյանքը, մինչև 15 տարեկան դեռահասների շրջանում զարգացնել ֆիզիկական դաստիարակությունը հայտնաբերել և մեծ սպորտ ուղղորդել տաղանդավոր երեխաներին: Ստեղծել համայնքի մարզիկների պարապմունքների համար պայմաններ, ապահովել նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային նշանակության միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են հանրապետության լավագույն մարզիկների բացահայտմանը: Այդ մարզիկները հետագայում ներգրավվելու են հանրապետության հավաքականների կազմում միջազգային մրցաշարերին մասնակցելու համար: Ըստ արժանվույն գնահատել միջազգային մրցաշարերում առավել բարձր արդյունք ցույց տված համայնքի մարզիկներին և նրանց մարզիչներին:

### **4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Պատանիների և երիտասարդության շրջանում մասսայական դարձնել սպորտը ու առողջ ապրելակերպը, նպաստել առողջ հասարակություն ունենալու գործին: Մինչև 15 տարեկան սովորողների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում ֆիզիկական

դաստիարակության ապահովում: Մարզական դաստիարակչական ծրագրերի իրականացում մարզադպրոցներում: Միջազգային մրցաշարերում տարած հաղթանակների միջոցով առավել հայտնի դարձնել մեր երկիրը և քաղաքը:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ համար այս գծով նախատեսված է **465257,5 հազ դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>465257.5</b>	<b>465257.5</b>	<b>0.0</b>
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	3100.0	3100.0	
- Ներքին գործուղումներ	4221	29807.0	29807.0	0.0
- Արտասահմանյան գործուղումներ	4222	1000.0	1000.0	
-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	410206.5	410206.5	0.0
-Կրթական սպորտային և մշակութային նպաստներ բյուջեից	4727	7644.0	7644.0	0.0
-Այլ նպաստներ բյուջեից	4729	11000.0	11000.0	
Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1500.0	1500.0	
-Այլ ընթացիկ ծախսեր	4861	1000.0	1000.0	

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01-2018թ. – 30.12 -2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

2018թ. բյուջետային տարվա հատկացումների հաշվին նախատեսվում է պահպանել համայնքային ենթակայության թվով 15 մարզադպրոցներ: Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված տարիֆիկացիաները, երեխաների և խմբերի քանակները: Կոմունալ ծախսերը ևս ներառված են պահպանման ծախսերում: 2018թ. ընթացքում նախատեսվում է կազմակերպել և անցկացնել մի շարք քաղաքային միջոցառումներ: Քսանչորս մարզաձևերից հանրապետությունում անցկացվող թվով 151 հանրապետական, միջազգային մարզական խաղերի, առաջնությունների, մրցաշարերի մասնակցության համար նախատեսվում է գործուղել քաղաքի մարզիկներին: 2017թ. միջազգային մրցաշարերում տարբեր մարզաձևերից առավել բարձր արդյունք ցույց տված մարզիկների՝ թվով 86 մարզիչներին նախատեսվում է վճարել կիսամյակային հավելավճարներ: Գումարներ են նախատեսվել նաև թվով երկու մարզադպրոցների

համար համապատասխան տարածքներ վարձակալելու համար: Գումար է նախատեսվել նաև տարվա ընթացքում առավել ակնառու հաջողություններ ունեցած մարզիկներին խրախուսելու համար:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

**1. Ծրագրի անվանումը**

**<< Գրադարանային ծառայություններ >>**

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին **08**, խումբ **2**, դաս **1**

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Թվով ութ գրադարանների պահպանման միջոցով համայնքի բնակչության բոլոր խավերին ապահովել գեղարվեստական, մասնագիտական և տեխնիկական գրականությամբ: Գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթական համակարգի գործունեության օժանդակում:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Ավելացնել գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը՝ բարձրացնելով սպասարկման որակը, թարմացնել և արդիականացնել գրադարանային ֆոնդը:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ. նախատեսվում է **45774.8 հազ. դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>45774.8</b>	<b>45774.8</b>	<b>0,0</b>
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	1200,0	1200,0	0,0
-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	44574.8	44574.8	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

**8. Տեղեկանք հիմնավորում**

2018թ բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Աշխատողների 44 հաստիքային միավորների աշխատավարձի սուբսիդավորման համար նախատեսվել է 43074.8 հազ. դրամ, կոմունալ և պահպանման ծախսերի սուբսիդավորման համար 1500.0 հազ.դրամ: Նախատեսվում է մեկ գրադարանի համար տարածքի վարձակալություն, որի վերաբերյալ կա համայնքի ավագանու համապատասխան որոշում:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՅԿԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԿՅԱԼՆԵՐ**

**1. Ծրագրի անվանումը**

<< Թանգարաններ և ցուցասրահներ >>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 08, խումբ 2 , դաս 2

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի բնակչության բոլոր խավերին, համայնք այցելած զբոսաշրջիկներին և հյուրերին պատմամշակութային և գրական ժառանգության հետ ծանոթացում:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Ավելացնել համայնք այցելած զբոսաշրջիկների և հյուրերի թիվը, դրա արդյունքում համայնքը դարձնել ավելի գրավիչ և ճանաչված արտերկրում:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ. համար ծրագրի բյուջեն կազմում է՝ **63935.9հազ դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN Հոդված	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>63935.9</b>	<b>63935.9</b>	<b>0,0</b>
-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	63935.9	63935.9	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01.2018թ. - 30.12.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

2018թ. բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Ոլորտն ունի թվով 5 թանգարան և զբոսայգիների խնդիրներով զբաղվող մեկ համայնքային կազմակերպություն: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը՝ 63 հաստիքային միավորի համար 58181.4 հազ.դրամի չափով և պահպանման ծախսերը 4160.0 հազ. դրամի չափով, ինչպես նաև համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի գումարը՝ 1594.5 հազ. դրամի չափով, որը կուղղվի կազմակերպությունների զբաղեցրած տարածքի ընթացիկ նորոգման, գույքի ձեռք բերման և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը, որոնք ըստ կատարած գանձումների կներկայացվեն կազմակերպությունների կողմից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽԱԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

*<<Համայնքային մշակութային կազմակերպությունների պահպանում>>*

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 08, խումբ 2, դաս 3

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքում մինչև 15 տարեկան դպրոցականների շրջանում զարգացնել հոգևոր, երաժշտական, մշակութային դաստիարակությունը՝ գեղագիտական, ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Մինչև 15 տարեկան դպրոցականների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթի-մշակութային դաստիարակչական ծրագրերի իրականացում:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ. համար նախատեսվում է՝ **425578.7 հազ. դրամի**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	N Հոսիված	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>425578.7</b>	<b>425578.7</b>	<b>0.0</b>
-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	425578.7	425578.7	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01.2018թ.- 30.12.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

2018թ. բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Ոլորտն ունի թվով 5 երաժշտական դպրոց, մեկ արվեստի դպրոց, մեկ պար արվեստի դպրոց, մանկապատանեկան արվեստի պալատ և երիտասարդական պալատ: Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված տարիֆիկացիաները, երեխաների և խմբերի քանակները, որոնց համար կազմակերպվում է արտադպրոցական կրթություն: Համայնքային ենթակայությամբ գործում են նաև մեկ տիկնիկային թատրոն և մեկ նվագախումբ: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների 436 հաստիքային միավորի համար նախատեսված՝ 384575.5 հազ. դրամ աշխատավարձը, պահպանման ծախսեր՝ 2145.0 հազ. դրամի չափով, ինչպես նաև համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի գումարը՝ 38858.5 հազ. դրամի չափով, որը կուղղվի կազմակերպությունների զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման, ընթացիկ նորոգման, գույքի ձեռք բերման, սաների անհատական պարապմունքների համար ուսուցիչների հավելավճարների վճարման և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը, որոնք ըստ կատարած գանձումների կներկայացվեն կազմակերպությունների կողմից առանձին հայտերով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՏՎՅԱԼՆԵՐ



### 1. Ծրագրի անվանումը

<<Հուշարձանների վերանորոգում և պահպանում>>

### 2. Ծրագրի դասիչը

Բաժին 08, խումբ 2, դաս 7

### 3. Ծրագրի իրականացման նպատակը

Ստեղծել բարեկարգ տարածքներ մշակութային հանգստի համար: Վերանորոգել և բարեկարգել մշակութային շինությունները և հարակից տարածքները:

### 4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Արդյունքում ապագա սերունդներին փոխանցելու համար կապահովվի քաղաքի պատմամշակութային ժառանգության պատշաճ պահպանումը և դրանք կունենան ավելի ներկայանալի տեսք համայնքի հյուրերի և զբոսաշրջիկների համար:

### 5. Ծրագրի բյուջեն

Նշված ուղղությամբ 2018թ համար նախատեսվում է **4500.0 հազ դրամ**

### 6. Ծրագրի բացվածքը

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հորված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>4500,0</b>	<b>2800,0</b>	<b>1700,0</b>
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	1500,0	1500,0	0,0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1300,0	1300,0	0,0
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1700,0	0,0	1700,0

### 7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

- 01.01.2018թ. - 31.12.2018թ.

- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում - 01.04.2018թ. - 30.10.2018թ.

### 8. Տեղեկանք հիմնավորում

Լայն թափ ստացած Կումայրի պատմական կենտրոնի վերականգնման աշխատանքներին զուգահեռ 2018թ. նախատեսվում է պատմամշակութային հուշարձանները և դրանց տարածքները բերել պատշաճ տեսքի, ինչպես նաև քաղաքի

պատմամշակութային տարածքները առավել գրավիչ և հարմարավետ դարձնելու նպատակով նախատեսվում է հուշարձանների արտաքին տեսքի բարելավման աշխատանքներ՝ մասնավորապես հուշարձանների մաքրում լվացման եղանակով և ցուցանակների տեղադրման աշխատանքներ: Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հողվածով նախատեսվել են միջոցներ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու հարակից տարածքների բարեկարգման աշխատանքները ավարտելուց հետո տարածքում մնացած շինարարական տեխնիկայից ազատման և կարգաբերման աշխատանքների համար:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԿՅԱԼՆԵՐ**

**1. Ծրագրի անվանումը**

<<Աջակցություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին>>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 08, խումբ 4, դաս 2

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Աջակցել տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացմանն և հզորացմանը, համաֆինանսավորել համայնքային զարգացմանը միտված ծրագրերը :

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Արդյունքում ակնկալվում է ունենալ ավելի հզոր հասարակական կառույցներ, որոնց գործունեությունը ուղղված կլինի քաղաքացիական հասարակության կայացմանը և դերի բարձրացմանը:

**5. Ծրագրի բյուջեն**

Նշված ուղղությամբ 2018թ համար նախատեսվում է **16500.0 հազ դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների անվանումները	Հողված №	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>16500,0</b>	<b>16500,0</b>	<b>0,0</b>
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	16500,0	16500,0	0,0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01.2018թ. - 31.12.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Գումարների հատկացումները համայնքային բյուջեից կիրականացվեն կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի հիման վրա՝ նախատեսված գումարից 2000.0 հազ. դրամը պլանավորվում է հատկացնել երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված տարաբնույթ ծրագրերի ֆինանսավորմանը, 4000.0 հազ. դրամը ուղղել համայնքում տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի համաֆինանսավորմանը, 6000.0 հազ. դրամ կուղղվի մշակութային ծրագրերի ֆինանսավորմանը և 4500.0 հազ. դրամ կուղղվի համայնքի տնտեսական կարողությունների և տուրիզմի զարգացմանը միտված ծրագրերի իրականացմանը:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

<< **Մշակութային միջոցառումների իրականացում** >>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 08, խումբ 6, դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի բնակիչներին, հատկապես երիտասարդությանը մասնակից դարձնել մշակութային կյանքին:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքային մշակութային միջոցառումների և տոնակատարությունների կազմակերպում, որոնց արդյունքում ժողովրդին, հատկապես՝ երիտասարդությանը և համայնքի հյուրերին կմատուցվեն բարձրաճաշակ մշակութային ծառայություններ:

**5. Ծրագրի բյուջեն**

Նշված ուղղությամբ 2018թ համար նախատեսվում է **26530.0 հազ դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>26530.0</b>	<b>26530.0</b>	<b>0,0</b>
-Այլ ընթացիկ ծախսեր	4861	26530,0	26530.0	0,0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

- 01.01.2018թ. - 31.12.2018թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Համայնքային միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը և դրանց իրականացման համար նախատեսված գումարների չափը ներկայացվում է կից հավելվածով: Համայնքի բյուջեով հաստատված հատկացումների սահմաններում համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախահաշիվների հիման վրա կիրականացվեն նախանշված միջոցառումները

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

<<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների պահպանում>>

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 09, խումբ 1, դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի 1- 6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքի 1-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող 24 մանկապարտեզներում, երեխա-հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման ապահովում:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ համար այս ուղղությամբ նախատեսված է **599270.2 հազ դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>599270.2</b>	<b>599270.2</b>	<b>0,0</b>
-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	599270.2	599270.2	0,0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

07. 01. 2018թ -28.12.2018թ

**8. Տեղեկանք հիմնավորում**

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված տարիֆիկացիաները և խմբերի քանակները: 2018թ. բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Ոլորտի համայնքային կազմակերպությունները 24-ն են: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը, ըստ ներկայացված փաստաթղթերի կազմում է 2245 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների 514 հաստիքային միավորի համար նախատեսված՝ 458740.8 հազ. դրամ աշխատավարձը, ինչպես նաև համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի գումարը՝ 140529.4 հազ. դրամի չափով, որը կուղղվի զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման և մանկապարտեզ հաճախող երեխաների սննդի ձեռք բերման ծախսերի ֆինանսավորմանը, համապատասխանաբար՝ 30240.3 հազ. դրամի և 110289.1 հազ. դրամի չափերով: Ծախսերը պլանավորվել են մանկապարտեզի սաների ութսունմեկ տոկոս միջին հաճախելիության սահմաններում:

**1. Ծրագրի անվանումը**

**<<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համաֆինանսավորում և սոցիալապես անապահով երեխաների վարձի փոխհատուցում>>**

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին 09, խումբ 6, դաս 1

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի 1- 6 տարեկան սոցիալապես անապահով և հատուկ արտոնություններից օգտվող երեխաների ցերեկային խնամք համայնքապատկան և միջազգային կազմակերպությունների կողմից համաֆինանսավորվող մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց վարձավճարների և պահպանման ծախսերի փոխհատուցում:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքի 1-6 տարեկան սոցիալապես անապահով երեխաների ընդգրկում գործող համայնքապատկան և միջազգային կազմակերպությունների կողմից համաֆինանսավորվող մանկապարտեզներում, նրանց թվի ավելացում, որը կնպաստի անապահով ընտանիքների երեխաների բնականոն զարգացման ապահովմանը, անկախ սոցիալական վիճակից:

**5. Ծրագրի բյուջեն**

2018թ համար այս ուղղությամբ նախատեսված է **11654.7 հազ դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված N	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>11654.7</b>	<b>11654.7</b>	<b>0.0</b>
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	11654.7	11654.7	0.0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01. 02.2018թ - 28.12.2018թ

## **8. Տեղեկանք հիմնավորում**

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել 2017թ. փաստացի ծախսերը: 2018թ. նախատեսվում է ավագանու սահմանած արտոնությունների փաթեթի հիման վրա սոցիալապես անապահով և հատուկ արտոնություններից օգտվող թվով 654 երեխաների ընդգրկել ծրագրում, ապահովելով սոցիալապես անապահով երեխաների առավել լայն շրջանակի ինտեգրումը հասարակությանը: Ծրագրով նախատեսվում է նաև համայնքի ստանձնած պարտավորությունների շրջանակներում 8349.8 հազար դրամի չափով՝ 100 տոկոսով ֆինանսավորել Մուշ թաղամասում գործող Մուշ զարգացման կենտրոնի գործունեությունը, որը հիշյալ թաղամասում մանկահասակ երեխաների ցերեկային խնամք իրականացնող միակ հաստատությունն է և մինչև 2018 թվականը համաֆինանսավորում էր Վարելի Վիժեն Հայաստան կազմակերպության կողմից: Նախատեսվում է 2019 թվականից կենտրոնը դարձնել համայնքային կազմակերպություն և ընդհանուր հիմունքներով սուբսիդավորել համայնքի բյուջեից:

### ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

### ՏՎՅԱԼՆԵՐ

#### **1. Ծրագրի անվանումը**

**«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման համաֆինանսավորում»**

#### **2. Ծրագրի դասիչը**

Բաժին 09, խումբ 6, դաս 1

#### **3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաների համար ապահովել օրենքով սահմանված նորմերին համապատասխան բարենպաստ պայմաններ:

#### **4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքում գործող թվով քսանչորս մանկապարտեզները կապահովվեն հաստատություններ հաճախող երեխաների կրթական գործընթացի կազմակերպման համար պատշաճ պայմաններով:

#### **5. Ծրագրի բյուջեն**

2018թ. համար այս ուղղությամբ նախատեսված է **19709.7 հազ դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը (ս4+ս5)	այդ թվում՝	
			վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>19709.7</b>	<b>19709.7</b>	<b>0,0</b>
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	19709.7	19709.7	0,0

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

10.01.2018թ -25.12.2018թ

**8. Տեղեկանք հիմնավորում**

Նախատեսվում է 2018 թվականի համայնքի բյուջեից 19709.7 հազ. դրամի չափով ֆինանսավորել մանկապարտեզների զբաղեցրած տարածքների ընթացիկ նորոգման, գույքի, տնտեսական ապրանքներ ձեռք բերման և պահպանման համար անհրաժեշտ այլ ծախսերը: Ֆինանսավորումը կիրականացվի մանկապարտեզների կարիքների հիման վրա կազմված ծրագիր հայտերով:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

